ՀՀ կառավարության պարտքը

2021 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ

ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագիրը թարմացվել է 13.09.2021 թ. դրությամբ:

Սույն տեղեկագրի հրապարակման նպատակն է ապահովել կառավարության պարտքի գծով թափանցիկությունը, հաշվետվողականությունը, կանխատեսելիությունը և հրապարակայնությունը ու սպառողների լայն շրջանակներին տեղեկացնել կառավարության պարտքի գծով կատարված գործառնությունների և վերջին զարգացումների վերաբերյալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Պետական պարտքը
- Կարևոր իրադարձությունները
- Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին
- Կառավարության պարտքի սպասարկումը (տոկոսավճարներ)
- Կառավարության պարտքը բնութագրող ցուցանիշները և 2021-2023 թթ. ուղենիշները
- Կառավարության պարտքի մարման և սպասարկման ժամանակացույցը
- Կառավարության պարտքի կառուցվածքը
- Պետական գանձապետական պարտատոմսերը
- Գանձապետական պահառու
- Կառավարության արտաքին վարկերը և փոխառությունները
- Արտարժութային պետական պարտատոմսերը
- Կառավարության երաշխիքները
- Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները
- Սահմանումները և մեթոդաբանությունը

Պետական պարտքը (1)

Պետական պարտք
4,418 մլրդ դրամ
8,953 մլն ԱՄՆ դոլար

Կառավարության պարտք
4,187 մլրդ դրամ
8,485 մլն ԱՄՆ դոլար

Կենտրոնական բանկի արտաքին պարտք
231 մլրդ դրամ
468 մլն ԱՄՆ դոլար

Արտաքին պարտք
3,052 մլրդ դրամ
6,185 մլն ԱՄՆ դոլար

Ներքին պարտք
1,135 մլրդ դրամ
2,300 մլն ԱՄՆ դոլար

Կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր
54 մլրդ դրամ
110 մլն ԱՄՆ դոլար

Պետական պարտքը (2)

մլրդ դրամ	31.12.2020	31.08.2021	Փոփոխություն	
			մլրդ դրամ	%
ՀՀ պետական պարտք	***4,164.3***	***4,418.0***	***253.8***	***6.1***
ՀՀ կառավարության պարտք	**3,923.9**	**4,187.2**	**263.3**	**6.7**
արտաքին պարտք	*2,926.2*	*3,052.3*	*126.0*	*4.3*
արտաքին վարկեր և փոխառություններ	2,438.0	2,226.9	(211.0)	(8.7)
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	3.3	10.4	7.1	217.2
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	480.5	810.8	330.3	68.7
արտաքին երաշխիքներ	4.5	4.1	(0.4)	(9.2)
ներքին պարտք	*997.6*	*1,134.9*	*137.3*	*13.8*
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	955.5	1,082.1	126.6	13.2
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	42.1	*52.8*	*10.7*	*25.4*
ներքին երաշխիքներ	-	-	-	-
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	**240.4**	**230.9**	**(9.5)**	**(3.9)**
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	63.1	54.2	(8.8)	(14.0)

մլն ԱՄՆ դոլար	31.12.2020	31.08.2021	Փոփոխություն	
			մլն ԱՄՆ դոլար	%
ՀՀ պետական պարտք	***7,968.5***	***8,952.7***	***984.2***	***12.4***
ՀՀ կառավարության պարտք	**7,508.5**	**8,484.8**	**976.3**	**13.0**
արտաքին պարտք	*5,599.5*	*6,185.1*	*585.6*	*10.5*
արտաքին վարկեր և փոխառություններ	4,665.2	4,512.6	(152.6)	(3.3)
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	6.3	21.2	14.9	236.0
ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	919.4	1,643.0	723.6	78.7
արտաքին երաշխիքներ	8.6	8.3	(0.3)	(3.8)
ներքին պարտք	*1,909.0*	*2,299.8*	*390.7*	*20.5*
ներքին վարկեր և փոխառություններ	-	-	-	-
ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր	1,828.5	2,192.8	364.3	19.9
ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր	80.6	107.0	26.4	32.8
ներքին երաշխիքներ	-	-	-	-
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	**459.9**	**467.8**	**7.9**	**1.7**
ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր	120.7	109.9	(10.8)	(8.9)

Կարևոր իրադարձությունները

ՀՀ կառավարությունը 26.01.2021թ. կապիտալի միջազգային շուկայում տեղաբաշխել է 750 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով, 3.6% արժեկտրոնային եկամտաբերությամբ եվրապարտատոմսեր: Եվրապարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը կազմել է 3.875%: Պահանջարկը գերազանցել է 2.5 միլիարդ ԱՄՆ դոլարը:

18.02.2021թ. ՀՀ կառավարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև ստորագրվել է նոր վարկային համաձայնագիր՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»: Վարկի գումարը կազմել է 7.4 մլն ԱՄՆ դոլար, այն տրամադրվել է 25 տարի ժամկետով, որից 15 տարին արտոնյալ է:Վարկի տոկոսադրույքը լողացող է՝ ԱՄՆ դոլարի 6-ամսյա Libor դրույքաչափ + փոփոխական մարժա:

29.04.2021թ. տեղի է ունեցել 29.10.2037թ. մարման ենթակա պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխում: Հիմնական աճուրդին տեղաբաշխման ենթակա հայտարարված ծավալը կազմել էր 40 մլրդ դրամ, որի դիմաց պահանջարկը կազմել էր 64.1 մլրդ դրամ: Փաստացի տեղաբաշխված ծավալը կազմել է 45.2 մլրդ դրամ, միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.7309%, սահմանային եկամտաբերությունը՝ 9.9465%:

Հիմք ընդունելով «2021 թվականի վիճակագրական ծրագրով» նախատեսված աշխատանքները և համաձայն ՀՆԱ-ի տվյալների մշակման, վերանայման և ներկայացման միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն 2021թ. մայիսին ներկայացրել է ՀՆԱ-ի 2019թ. վերջնական հաշվետու ցուցանիշը: Արդյունքում՝ վերագնահատվել է 2019թ. համար կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշը, որը կազմել է 50.1%՝ նախկինում հրապարակված 49.9%-ի փոխարեն:

2021թ. հունիսի 17-23-ը կազմակերպվել էր Համաշխարհային բանկի հեռավար առաքելությունը՝ նվիրված Հայաստանում պարտքի հաշվետվողականությանը: Առաքելության ընթացքում ՀԲ ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության ղեկավարության և անձնակազմի հետ ու բարձր են գնահատել Հայաստանում կառավարության պարտքի հաշվետվողականության մակարդակը: Առաջիկայում կամփոփվի և կներկայացվի առաքելության հուշագիրը:

ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված ու հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2021թ. ապրիլի 30-ի պաշտոնական դիմումը՝ 2021 թվականի հունիսի 29-ին Համաշխարհային բանկը տեղեկացրել է, որ հայկական կողմի խնդրանքը բավարարվել է և Զարգացման Միջազգային Ընկերակցության վարկերի գծով հավելյալ 1.7% տոկոսադրույքի կիրառումը չեղարկելու որոշումը երկարաձգվել է ևս մեկ տարով (2021թ. հուլիսի 1-ից մինչև 2022թ. հունիսի 30-ը): Արդյունքում արտաքին տոկոսավճարների գծով ՀՀ պետական բյուջեի տնտեսումը կկազմի մոտ 12 մլն ԱՄՆ դոլար:

13.07.2021թ. տեղի է ունեցել 29.10.2031թ. մարման ենթակա պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխում: Հիմնական աճուրդին տեղաբաշխման ենթակա հայտարարված ծավալը կազմել էր 50 մլրդ դրամ, որի դիմաց պահանջարկը կազմել էր 104.5 մլրդ դրամ: Փաստացի տեղաբաշխված ծավալը կազմել է 46.6 մլրդ դրամ, միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.9131%, սահմանային եկամտաբերությունը՝ 9.9990%:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին



մլրդ դրամ	01.01.2021-31.08.2021	%
Ընդամենը ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին	***469.8***	***100.0***
ներքին աղբյուրներից	**132.9**	**28.3**
պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտք	*132.9*	
տեղաբաշխումից մուտք	260.2	
մարում / հետգնում	(127.3)	
արտաքին աղբյուրներից	**336.9**	**71.7**
վարկերի և փոխառությունների գծով զուտ մուտք	*(41.8)*	
վարկերի և փոխառությունների ստացում	37.0	
նպատակային վարկեր	37.0	
բյուջետային աջակցության վարկեր	-	
վարկերի և փոխառությունների մարում	(78.8)	
արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտք	*378.7*	
տեղաբաշխումից մուտք	378.7	
մարում / հետգնում	-	

Կառավարության պարտքի սպասարկումը (տոկոսավճարներ)



մլրդ դրամ	01.01.2021-31.08.2021	%
Ընդամենը տոկոսավճարներ	**104.2**	**100.0**
ներքին տոկոսավճարներ	*57.9*	*55.5*
պետական գանձապետական պարտատոմսերի գծով	57.9	
արտաքին տոկոսավճարներ	*46.3*	*44.5*
արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով	25.0	
արտարժույթով պետական պարտատոմսերի գծով	21.3	

Կառավարության պարտքը բնութագրող ցուցանիշները և 2021-2023 թթ. ուղենիշները

	Ուղենիշ	31.12.2020թ. փաստացի	31.08.2021թ. փաստացի
Միջին կշռված տոկոսադրույք, %		4.3	4.5
Վերաֆինանսավորման ռիսկ			
Մինչև մարումը մնացած միջին ժամկետ, տարի	8 - 11	8.8	8.7
Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, %		5.8	5.5
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին), %	առավելագույնը 20%	11.5	---
Տոկոսադրույքի ռիսկ			
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի տեսակարար կշիռ, %	առնվազն 80%	80.4	82.6
Մինչև տոկոսադրույքի վերաֆիքսումը մնացած միջին ժամկետ, տարի		7.1	7.4
Առաջիկա 365 օրվա ընթացքում վերաֆիքսվող պարտքի տեսակարար կշիռ, %		25.7	22.5
Փոխարժեքի ռիսկ			
Ներքին պարտքի տեսակարար կշիռ, %	առնվազն 25%	25.4	27.1
ՀՀ դրամով ներգրավված պարտքի տեսակարար կշիռ, %	առնվազն 25%	24.4	26.1

Կառավարության պարտքի մարման և սպասարկման ընդհանրացված ժամանակացույցը



Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը



Կառավարության պարտքի սպասարկման ժամանակացույցը



Կառավարության պարտքի կառուցվածքը (1)

Ըստ գործիքակազմի



Ըստ ռեզիդենտության



Ըստ ներգրավման արժույթի



Ըստ տոկոսադրույքի տեսակի



Կառավարության պարտքի կառուցվածքը (2)

Ըստ ներգրավման արժութի



Ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության



Ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության



Պետական գանձապետական պարտատոմսերը (1)

	31.12.2020	31.08.2021
Շրջանառության մեջ գտնվող ծավալ, մլրդ դրամ	958.8	1,092.6
Միջին կշռված եկամտաբերություն, %	10.39	10.07
Միջին կշռված ժամկետայնություն, օր	3,945	4,002

Պարտատոմսի տեսակ	Մինչև մարումը մնացած միջին կշռված ժամկետ, օր	Միջին կշռված եկամտաբերություն, %
Կարճաժամկետ պարտատոմսեր	137	6.80
Միջնաժամկետ պարտատոմսեր	867	7.85
Երկարաժամկետ պարտատոմսեր	5,525	11.17
Խնայողական պարտատոմսեր	462	9.05

2021թ. հունվար-օգոստոս ամիսներին առաջնային շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 9.0722%, իսկ միջին կշռված ժամկետայնությունը՝ 3,652 օր:

Կառուցվածքն ըստ պարտատոմսի տեսակի



Կառուցվածքն ըստ մինչև մարումը մնացած ժամկետի



Շրջանառության մեջ գտնվող ուղենշային պարտատոմսեր

ԱՄՏԾ	Արժեկտրոնի եկամտա-բերություն	Շրջանառության ծավալ, մլրդ դրամ	Մարման օր
AMGN36294236	6.50%	48.21	29-ԱՊՐ-2023
AMGN60294243	8.00%	31.78	29-ԱՊՐ-2024
AMGN60294250	7.00%	68.37	29-ԱՊՐ-2025
AMGB1029A292	9.00%	153.76	29-ՀՈԿ-2029
AMGB2029A366	13.00%	71.00	29-ՀՈԿ-2036
AMGB3129A504	9.75%	100.41	29-ՀՈԿ-2050

Ըստ ներդրողների տեսակի



* ներառում է ռեպո / հակադարձ ռեպո գործարքները

Պետական գանձապետական պարտատոմսերը (2)

Պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդները 2021 թ. օգոստոսին

Տեղաբաշխման աճուրդի ամսաթիվ	Վերջնահաշ-վարկի ամսաթիվ	ԱՄՏԾ	Տեղաբաշխման տեսակ	Տեղաբաշխման ենթակա ծավալ	Պահանջարկ	Տեղաբաշխված ծավալ	Գին	Միջին կշռ. եկամտաբե-րություն	Սահմանային եկամտաբե-րություն	Մարման ամսաթիվ
2-ՕԳՍ-2021	3-ՕԳՍ-2021	AMGT52018224	Աճուրդ	3,000,000,000	1,530,000,000	1,530,000,000	92.30	8.2723%	8.4000%	1-ՕԳՍ-2022
3-ՕԳՍ-2021	3-ՕԳՍ-2021	AMGT52018224	Ուղղակի վաճառք			3,000	92.30	8.2723%		1-ՕԳՍ-2022
10-ՕԳՍ-2021	11-ՕԳՍ-2021	AMGN60294268	Աճուրդ	20,000,000,000	25,167,000,000	20,000,000,000	92.28	9.6042%	9.9733%	29-ԱՊՐ-2026
11-ՕԳՍ-2021	11-ՕԳՍ-2021	AMGN60294268	Լրացուցիչ աճուրդ	4,000,000,000	892,000,000	892,000,000	92.28	9.6042%		29-ԱՊՐ-2026
16-ՕԳՍ-2021	17-ՕԳՍ-2021	AMGT52136224	Աճուրդ	3,000,000,000	480,000,000	420,000,000	93.50	8.3490%	8.4495%	13-ՀՆՍ-2022
Ընդամենը				**30,000,000,000**	**28,069,000,000**	**22,842,003,000**		**9.4919%**		





Գանձապետական պահառու

	31.12.2020թ.	31.08.2021թ.
ԳՊ-ի շրջանառության ծավալը (մլն դրամ)	5,813.4	5,557.2
ԳՊ-ի կշիռը պետական գանձապետական պարտատոմսերում, %	0.61	0.51
Ընդամենը դեպո հաշիվների քանակը (աճողական)	1,715	1,747

2021 թ. հունվար-օգոստոս ամիսներին ԳՊ-ի միջոցով կատարված ներդրումների ծավալը կազմել է 4,942.7 մլն դրամ, որից 1,832.1 մլն դրամը՝ խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի գծով:

ԳՊ ներդրողների կառուցվածքը



2021թ. հունվար-օգոստոսին կատարված ներդրումների կառուցվածքը



Վաճառքում առկա խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի պայմաններն առ 31.08.2021թ.	
Մարման ժամկետ	Արժեկտրոնային եկամտաբերություն, %
6 ամիս	7.5
12 ամիս	8.5
24 ամիս	9.0
36 ամիս	9.2

Կառավարության արտաքին վարկերը և փոխառությունները

	31.12.2020	31.08.2021
Պարտքի մնացորդը (մլն ԱՄՆ դոլար)	**4,665.2**	**4,512.6**
այդ թվում՝		
միջազգային կազմակերպությունների գծով	3,588.2	3,506.6
օտարերկրյա պետությունների գծով	1,056.5	987.8
առևտրային բանկերի վարկերի գծով	20.6	18.3
Միջին կշռված տոկոսադրույքը, %	**1.5**	**1.5**
Մինչև մարումը մնացած միջին ժամկետը, տարի	**8.4**	**8.1**

Կատարված գործառնությունները (2021 թ. հունվար-օգոստոս, մլն ԱՄՆ դոլար)	
Տոկոսավճար	48.5
Մայր գումարի մարում	152.7
Վարկային միջոցների ստացում	72.5

Արտաքին վարկերի կառուցվածքն ըստ վարկատուների



Արտարժութային պետական պարտատոմսերը (1)

Տեղաբաշխման պայմանները	2025թ. մարվող պարտատոմսեր	2029թ. մարվող պարտատոմսեր	2031թ. մարվող պարտատոմսեր
Թողարկող	Հայաստանի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետություն
Թողարկման ձևաչափ	RegS / 144A	RegS / 144A	RegS / 144A
Վարկանիշ	Ba3 (Moody's) / B+ (Fitch)	Ba3 (Moody's) / B+ (Fitch)	Ba3 (Moody's) / B+ (Fitch)
ԱՄՏԾ (ISIN)	US042207AB67 / XS1207654853	US042207AC41 / XS2010043904	US042207AD24 / XS2010028939
Դասիչ	IMBIG	IMBIG	IMBIG
Տեղաբաշխման ծավալ	500,000,000 ԱՄՆ դոլար	500,000,000 ԱՄՆ դոլար	750,000,000 ԱՄՆ դոլար
Գնանշման օր	2015թ. մարտի 19	2019թ. սեպտեմբերի 19	2021թ. հունվարի 26
Գործարքի կնքման օր	2015թ. մարտի 26	2019թ. սեպտեմբերի 26	2021թ. փետրվարի 2
Մարման ժամկետ	2025թ. մարտի 26	2029թ. սեպտեմբերի 26	2031թ. փետրվարի 2
Ժամկետայնություն	10 տարի	10 տարի	10 տարի
Մինչև մարումը մնացած ժամկետ	3.6 տարի	8.1 տարի	9.4 տարի
Մարման եղանակ	միանվագ՝ ժամկետի վերջում	միանվագ՝ ժամկետի վերջում	միանվագ՝ ժամկետի վերջում
Արժեկտրոն	7.15%	3.95%	3.60%
Արժեկտրոնի վճարման հաճախականություն	կիսամյակային՝ մարտի 26 և սեպտեմբերի 26	կիսամյակային՝ մարտի 26 և սեպտեմբերի 26	կիսամյակային՝ փետրվարի 2 և օգոստոսի 2
Արժեկտրոնի վճարման առաջին ամսաթիվ	2015թ. սեպտեմբերի 26	2020թ. մարտի 26	2021թ. օգոստոսի 2
Եկամտաբերություն	7.5%	4.2%	3.875%
Ուղենիշ	2025թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 2.0%	2029թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 1.625%	2030թ. մարման ենթակա ԱՄՆ գանձ. պարտատոմսեր՝ 1.039%
Շեղումը ուղենշի նկատմամբ	+ 551.8 բ.կ.	+ 242.8 բ.կ.	+ 283.6 բ.կ.
Շեղումը միջին սվոպի նկատմամբ	+ 543.7 բ.կ.	+ 255 բ.կ.	+ 280.2 բ.կ.
Ցուցակում	Իռլանդական ֆոնդային բորսա	Իռլանդական ֆոնդային բորսա	Իռլանդական ֆոնդային բորսա
Գլխավոր տեղաբաշխողներ	J.P.Morgan, Deutsche Bank, HSBC	J.P.Morgan, Citigroup	J.P.Morgan, Citigroup, HSBC
Տեղաբաշխման գին	97.568	97.976	97.738
Տեղաբաշխումից մուտք	487,840,000 ԱՄՆ դոլար	489,880,000 ԱՄՆ դոլար	733,035,000 ԱՄՆ դոլար
Հետգնված ծավալ	- ԱՄՆ դոլար	- ԱՄՆ դոլար	- ԱՄՆ դոլար
Մարված ծավալ	- ԱՄՆ դոլար	- ԱՄՆ դոլար	- ԱՄՆ դոլար
Շրջանառության մեջ գտնվող ծավալ	500,000,000 ԱՄՆ դոլար	500,000,000 ԱՄՆ դոլար	750,000,000 ԱՄՆ դոլար
Վճարված արժեկտրոն (աճողական)	214.500.000 ԱՄՆ դոլար	29,625,000 ԱՄՆ դոլար	13,500,000 ԱՄՆ դոլար
Վճարված զեղչատոկոս և հավելավճար	12,160,000 ԱՄՆ դոլար	10,120,000 ԱՄՆ դոլար	16,965,000 ԱՄՆ դոլար

Արտարժութային պետական պարտատոմսերը (2)



Աղբյուր՝ Bloomberg

Կառավարության երաշխիքները

Պրինցիպալ	Բենեֆիցիար	31.12.2020	31.08.2021
Ընդամենը երաշխիքներ, մլն ԱՄՆ դոլար		***129.3***	***118.2***
այդ թվում՝			
Արտաքին երաշխիքներ		**129.3**	**118.2**
այդ թվում՝			
ՀՀ ԿԲ-ի արտաքին վարկերի գծով տրամադրված երաշխիքներ		*120.7*	*109.9*
այդ թվում՝			
ՀՀ կենտրոնական բանկ	Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	40.0	38.2
ՀՀ կենտրոնական բանկ	Ասիական Զարգացման Բանկ	13.9	13.3
ՀՀ կենտրոնական բանկ	Գերմանիա (KfW)	66.8	58.4
Այլ արտաքին երաշխիքներ		*8.6*	*8.3*
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ	Էռստե Բանկ (Ավստրիա)	8.6	8.3
Ներքին երաշխիքներ		-	-
այդ թվում՝			
		-	-

Կառուցվածքն ըստ բենեֆիցիարի



ՀՀ կառավարության կողմից երաշխիքների մարման և սպասարկման գծով կատարված վճարումները՝ պայմանավորված պրինցիպալի կողմից իր վճարային պարտավորությունների չկատարմամբ (2021 թ. հունվար-օգոստոս)	
-	մլն ԱՄՆ դոլար

Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները (1)

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	1,655.1	1,900.6	2,225.9	2,631.4	2,988.4	3,082.5	3,277.3	3,923.9
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	4,080.2	4,001.6	4,601.4	5,437.4	6,173.1	6,372.1	6,831.9	7,508.5
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	36.3	39.4	44.1	51.9	53.7	51.2	50.1	63.5
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, %								
ներքին պարտք	16.9	16.2	16.4	20.9	20.4	21.8	22.5	25.4
արտաքին պարտք	83.1	83.8	83.6	79.1	79.6	78.2	77.5	74.6
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, %								
արտաքին վարկեր և փոխառություններ	66.0	67.1	63.8	62.2	65.1	65.0	63.0	62.1
ներքին վարկեր և փոխառություններ	0.2	0.1	-	-	-	-	-	-
պետական գանձապետական պարտատոմսեր	16.6	15.3	14.4	19.3	18.4	19.1	20.8	24.4
արտարժութային պետական պարտատոմսեր	17.2	17.5	21.7	18.4	16.2	15.7	16.1	13.3
արտաքին երաշխիքներ	-	-	-	-	0.1	0.1	0.1	0.1
ներքին երաշխիքներ	0.06	0.05	0.04	0.13	0.15	0.14	-	-
Արժութային կառուցվածքը, %								
ՀՀ դրամով ներգրավված պարտք	16.6	15.3	14.4	19.3	18.4	19.1	20.8	24.4
արտարժույթով ներգրավված պարտք	83.4	84.7	85.6	80.7	81.6	80.9	79.2	75.6
USD	26.8	30.2	37.5	39.5	42.0	43.6	43.9	38.3
SDR	42.4	40.9	35.7	29.3	26.5	24.1	21.1	23.0
EUR	7.0	7.2	6.6	7.0	8.7	9.2	10.6	10.9
JPY	7.1	6.3	5.2	4.4	3.9	3.7	3.3	3.0
AED	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1
CNY	-	-	0.4	0.4	0.4	0.4	0.3	0.3
Կառուցվածքն ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետայնության, %								
կարճաժամկետ	4.5	3.2	2.5	4.4	3.0	2.6	4.4	3.1
միջնաժամկետ	11.2	10.2	21.8	21.5	23.4	22.7	16.4	27.9
երկարաժամկետ	84.3	86.6	75.7	74.0	73.5	74.6	79.2	69.0

Ամփոփ տարեկան ցուցանիշները և գործակիցները (2)

	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Կառուցվածքն ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %								
կարճաժամկետ	1.4	0.7	1.0	3.0	0.8	1.0	0.7	1.2
միջնաժամկետ	9.0	8.0	6.9	8.1	8.2	7.6	6.9	6.9
երկարաժամկետ	89.6	91.3	92.1	88.8	91.1	91.4	92.4	91.9
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, %								
լողացող տոկոսադրույքով	9.3	10.8	10.5	12.5	13.5	15.0	16.2	19.6
ֆիքսված տոկոսադրույքով	90.7	89.2	89.5	87.5	86.5	85.0	83.8	80.4
ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %	4.1	4.2	4.5	4.9	4.9	5.0	4.8	4.3
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը մնացած միջին ժամկետը, տարի	10.0	9.8	9.7	9.2	9.0	8.7	9.1	8.8
ՀՀ կառավարության պարտքի գծով տոկոսավճար, մլրդ դրամ	46.7	61.6	74.1	98.3	122.1	139.0	157.5	164.7
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	1.0	1.3	1.5	1.9	2.2	2.3	2.4	2.7
%-ներով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ	4.1	5.0	5.3	6.8	8.1	9.6	9.7	8.7
Պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին, մլրդ դրամ	143.5	83.8	316.8	409.4	278.7	132.9	233.4	354.6
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	3.1	1.7	6.3	8.1	5.0	2.2	3.6	5.7
ներքին աղբյուրներից, %	13.1	17.9	4.4	41.8	16.4	36.1	43.7	84.7
արտաքին աղբյուրներից, %	86.9	82.1	95.6	58.2	83.6	63.9	56.3	15.3

Սահմանումները և մեթոդաբանությունը (1)

Ինստիտուցիոնալ ծածկույթը

Կառավարության պարտքը ներառում է կառավարության բոլոր ուղղակի պարտքային պարտավորությունները, որոնց մարումն ու սպասարկումը կատարվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, և կառավարության կողմից երաշխավորված պարտքային պարտավորությունները:

Կիրառվող դասակարգումները

Կառավարության պարտքը դասակարգվում է ըստ հետևյալ հատկանիշների.

- *ըստ ռեզիդենտության՝ ներքին և արտաքին,*
- *ըստ ժամկետայնության (թողարկման և մինչև մարումը մնացած ժամկետի)՝ կարճաժամկետ (մինչև մեկ տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ), երկարաժամկետ (5-ից ավելի տարով),*
- *ըստ գործիքակազմի՝ վարկեր և փոխառություններ, պետական գանձապետական պարտատոմսեր, արտարժութային պետական պարտատոմսեր, երաշխիքներ,*
- *ըստ արժույթի՝ ազգային արժույթով և արտարժույթով,*
- *ըստ տոկոսադրույքի տեսակի՝ ֆիքսված և լողացող:*

Հաշվառման սկզբունքը

Կառավարության պարտքի վերաբերյալ տվյալները հաշվառվում են անվանական արժեքով՝ համախառն սկզբունքով և դրամարկղային եղանակով (բացառությամբ արտաքին վարկերի գծով մասհանումների, որոնք հաշվառվում են պարտավորության ստանձնման օրվա դրությամբ):

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հետևյալ հասկացությունները և մեթոդաբանական մոտեցումները.

- ***պարտքային պարտավորություն***՝ փոխառության (այդ թվում՝ ներքին և արտաքին շուկաներում տեղաբաշխվող արժեթղթերի) կամ վարկային պայմանագրով ստացված և որոշակի պահի դրությամբ չմարված գումարը, ներառյալ՝ ժամկետում չմարված տոկոսագումարը, ինչպես նաև տրամադրված պետական երաշխիքների գումարը,
- ***պետական պարտք***՝ Հայաստանի Հանրապետության անունից և ՀՀ կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ ԿԲ առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը: Այն կառավարության պարտքի և կենտրոնական բանկի պարտքի հանրագումարն է:
- ***կառավարության պարտք***՝ ՀՀ կառավարության ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ***կենտրոնական բանկի պարտք***՝ ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև ԿԲ ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ***ներքին պետական պարտք***՝ ՀՀ անունից՝ կառավարության լիազոր մարմնի կողմից ՀՀ ռեզիդենտների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,

Սահմանումները և մեթոդաբանությունը (2)

- ***արտաքին պետական պարտք***՝ ՀՀ անունից և Կենտրոնական բանկի անունից ՀՀ ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը,
- ***պետական երաշխիք***՝ որոշակի պահի դրությամբ կառավարության պարտավորությունը (բյուջետային երաշխիքը) փոխատուների և վարկատուների առջև, ինչպես նաև ԿԲ պարտավորությունը ոչ ռեզիդենտ փոխատուների և վարկատուների առջև ամբողջությամբ կամ մասնակի մարելու՝ ՀՀ ռեզիդենտ փոխառուների և վարկառուների կողմից վճարման ենթակա գումարները՝ սահմանված ժամկետներում նրանց կողմից չվճարվելու դեպքում,
- ***պարտքի մարում՝*** փոխառության կամ վարկային պայմանագրի հիման վրա պարտքային պարտավորության կատարումը,
- ***պարտքի սպասարկում՝*** փոխառության կամ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսագումարի, կոմիսիոն վճարի, տուժանքի և այլ վճարի կատարումը,
- ***ներքին պետական երաշխիքները*** ՀՀ ռեզիդենտներին տրամադրված բյուջետային երաշխիքները,
- ***արտաքին պետական երաշխիքները*** ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին ՀՀ և ԿԲ կողմից տրամադրված պետական երաշխիքները:

- Պետական պարտքի կառավարումն իրականացնում են ՀՀ ֆինանսների նախարարությունը և Կենտրոնական բանկը՝ իր պարտքի մասով:
- Ֆինանսների նախարարությունը և ԿԲ իրականացնում են պետական պարտքի գրանցումը, հաշվառումը և պատասխանատու են այդ հաշվառման հավաստիության համար:
- Պետական պարտքը հրապարակվում է ՀՀ ազգային արժույթով. այն կարող է հրապարակվել նաև այլ արժույթներով:
- Պետական պարտքի բաղադրիչներն են *ներքին պետական պարտքը, արտաքին պետական պարտքը* և *պետական երաշխիքները,*
- Պետական պարտքն ըստ ժամկետայնության լինում է *կարճաժամկետ (մինչև 1 տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ)* և *երկարաժամկետ (5-ից ավելի տարով):*
- Եթե միևնույն պարտավորության համար միաժամանակ երաշխիք են տրամադրել կառավարությունը և ԿԲ-ն, ապա պետական պարտքի կազմում հաշվառվում է դրանցից մեկը (առավելագույնը):
- Կառավարության կողմից ԿԲ համար տրամադրված արտաքին պետական երաշխիքը հաշվառվում է որպես ԿԲ պարտք:

Պետական պարտքի ձևավորման գործիքներն են.

- *ֆինանսական, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերը,*
- *ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը,*
- *պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը,*
- *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտքի փոխանցման գործարքի հետևանքով որպես պետական պարտք վերածևակերպված երրորդ անձանց պարտավորությունները,*
- *պետական պարտքի վերածևակերպման պայմանագրերը,*
- *պետական երաշխիքները:*